

ՍՈՒԴԱԿԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՉՔԱՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ
ՆՈՐ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆ

Գ. Հ. ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ուրախությամբ արձանագրելով, որ նյութական դժվարությունների այս շրջանում «Դիվան հայ վիճագրության» արժեքավոր շարքը համալրվեց կարևոր մի հատորով ևս¹, ապա նկատելով, որ սկզբնաղբյուրների այս տեսակի շոգու՛ածուների կազմումն ունի ինքնատիպ բարդություններ, ուստի և՛ ընթերցումների մշտական վերստուգման անհրաժեշտություն, հայտնում ենք, որ Էներկա հրատարակումով փորձում ենք հնարավոր չափով ճշգրտելու Ղրիմի նույնակ քաղաքում գտնվող մի արձանագրության ընթերցումը:

Հիշատակյա՛ծ պրակի կազմող Գ. Գրիգորյանի՝ այս արձանագրությանը ներարերող խոսքի ամբողջությունը հետևյալն է. «1985 թ. երկրորդ անգամ լինելով Սուդակի ամրոցում, արգելավայրի վարիչ Օ. Ի. Իվանովան մեզ ցույց տվեց տեղի թանգարանի ցուցասրահում դրված նորահայտ մի խաչքար՝ դեղնավուն կրաքարից, որի խայանշանի տակ կար Յ տող.

ՅՅ4. ԿԱՆԿՆԵՑԱԻ ՍԲ /ԽԱՉՍ ՅԻՇԱՏԱԿ/ Դ[ԱԻ]ԹԻ, ՆՈՐՇԱՅԻՆ»²:

Խոսքը վերաբերում է Սուդակի ջենովական հսկայատարած ամրոցի և կեղեցի-թանգարանում զետեղված մահարձան խաչքարի արձանագրությանը, որ առիթ³ ունեցանք լուսանկարելու և վերընթերցելու, ըստ այսմ և ներկայացնում ենք մեր աշխատանքի արդյունքը⁴:

Սկզբից ևեթ նկատենք, որ խաչքարի նյութն իրականում ո՛չ թե կրաքար է, այլ՝ այազաքար, ապա՝ ավելացնենք, որ արձանագրությունն ունի ո՛չ թե Յ, այլ՝ Տ տող. հրատարակիչը մոռացել է ասելու այս և ավելացնելու, որ վերջին երկու տողը եղծված ու անընթեռնելի են: Հավանական է՝ եղծվածություն պատճառն այն է, որ խաչքարի ստորին մասը երկար ժամանակ թաղված է եղել ծովափնյա՝ գրեթե միշտ խոնավ հողում. ավազաքարն էլ բավական փուխր է և խոնավության նկատմամբ զգայուն: Ի վերջո, արձանագրության ընթերցումը դժվար է նաև այն պատճառով, որ խաչքարն այժմ զետեղված է թանգարանի վատ լուսավորված մի հատվածում, ուստի և չի նկատվել, որ եղծված են նաև առանձին գրերու Այսպես.

«ԿԱՆԿՆԵՑԱԻ ՍԲ /ԽԱՉՍ Ի ՅԻՇԱՏԱԿ/ԿՈՒԹԻ[ԻՆ] ՆՈՐՇԱՅԻՆ/ [ՈՐ] ՓՈ-
ԽԵՑԱԻ //!» (4-րդ տողի վերջը և 5-րդն ամբողջությամբ եղծված՝ անընթեռ-
նելի):

Նախ նկատենք, որ արձանագրության գրերը բարձրաքանդակ են, տողեր՝ իրարից զատված են նույնպես բարձրաքանդակ՝ սահմանադատող գծերով. ապա ավելացնենք, որ «Դիվանի» հրատարակման համեմատ մեր ընթերցու-

1 Դիվան հայ վիճագրության, պրակ է, Ուկրաինա, Մուդոլա, կազմեց Գ. Մ. Գրիգորյան. Երևան, 1996, 410 էջ (այսուհետև՝ Դիվան, է):

2 Նույն տեղում, էջ 145:

3 1997 թ. հունիսի 7—14 ընթացքում Սուդակում մասնակցում էինք «Գրադարաններս /գրադարանային/ միությունները փոփոխվող աշխարհում. նոր տեխնոլոգիաներ և համագործակցության նոր ձևեր»՝ «Ղրիմ—97» միջազգային 4-րդ համաժողովին:

4 Մեր լուսանկարն ազոտ և տպագրության համար ո՛չ պիտանի եղավ. փոխարենը նրանով սակեցինք տեղում արված ընթերցումն ու ճշգրտեցինք գծանկարը, որ պատրաստել ենք սվևլ այլ հաշվով, որ զրևիև փոխարինում է նաև լուսանկարին և հստակ պատկերացում տալիս խաչքարանի կառուցվածքի ու հարգարանքի մասին. ավելին՝ արձանագրության 4-րդ տունը ընթերցեցինք առավելապես լուսանկարով:

մրն ունի մի քանի տարբերություն, որոնց թվարկումն անում ենք վիմագրիս մի շարք յուրահատկությունների նկարագրությանը զուգընթաց.

ա. առաջին տողի երկրորդ վերջին՝ «Ս[ՈՒՐ]Բ» ըստը կցագիր է. Բ գրի աջ ելուստները կցված են Ս-ի աջ ստեղծին:

բ. երկրորդ տողի Ի նախդիրը նույնպես կցագիր է. նախորդ՝ «խաչո» բառի Ս գրի աջ ստեղծը կատարում է Ի-ի ձախ ստեղծի դերը, նրան կցված է կապը և կարճ՝ աջ ստեղծը:



գ. երկրորդ տողի վերջին համարված Կ գիրն իրականում երրորդ տողի սկզբում է.

դ. նույն գրին հաջորդող, հրատարակչի՝ «Դ» ընթերցած գիրն իրականում կցագիր ՈՒ է՝ Ո-ի ձախ ստեղծի ստորին կեսն ընկած է (որոշ թեք դիրքից արված մեր լուսանկարի վրա պարզ երևում է, որ Ո-ի ձախ ստեղծը մինչև ստորին տողագիծ շարունակված է եղել), իսկ աջ ստեղծի մեջտեղի էլնում է Ի-ի աջ՝ ուղղագիծ ելուստը. նկատենք, որ այս կցագիրն առաջին հայացքից և անմիջապես Դ է թվում, սակայն ավելի ուշադիր դիտումն անհավանական է դարձնում այդ ընթերցման ճշտությունը՝ հատկապես դիտարկումով հաջորդ իրողություն, որ է՝

ե. ուշադիր դիտելիս ԹԻ երկտառի վերևում հստակ երևում է պատվի՝ համառոտման նշանը, որ ինչ-որ շափով ձուլված է վերին տողագծին.

զ. վերջին երկու ուղղամամբ վերանում է «յիշատակ Դ[ալ]թի» անճիշտ վերականգնման անհրաժեշտությունը, նրա փոխարեն ի հայտ է գալիս «Ի ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻԻՆ» կանոնական ձևը: «Կանգնեցաւ ի յիշատակութիւն» ոճը անխորթ՝ կիրառական է և տարբերակն է «կանգնեցաւ ի բարեխաւսութիւն» բանաձևի⁵.

է. «ՆՈՐՇԱՂԻՆ» անվան ՈՐ երկտառը ևս կցագրություն է. Ր-ի աջ՝ կարճ ելուստը շարունակությունն է Ո-ի աջ ստեղծի. Ո-ի երկու ստեղծի ստորին մա-

⁵ Նույն զրիմահայ արձանագրությունների մեջ տե՛ս. «կանկնեցաւ սուրբ նշանս ի բարե-

սերն ընկած են, այդ իսկ պատճառով ընդամենը մի փոքր են երկար Բ-ի կարճ ստեղծից.

բ. նույն անվան 2 գիրը պրակի կազմողը սխալմամբ է կարդացել Յ («նորշախն»): արձանագրության երկաթագիր գրերի շարքում սա շատ նման է բոլորգիր «հ»-ը⁵, այլև՝ սրա նկարվածքն ակներևաբար տարբեր է «ՅԻՇԱՆՏԱԿՈՒԹԻԻՆ» բառի առաջին Յ գրից.

թ. նորություն է 4-րդ տողի մեր ընթերցումը, որով ակներևաբար հաստատում է խաչքարի՝ մի մարդու (նորշահի, ո՛չ Դավթի և նորշահի) մահարձան լինելը. սրա՝ [ՈՐ] կապակցության ընթերցումը ենթադրական է և իր զբաղեցրած տեղի համեմատ, երևի նՈՐՇԱՆՆ անվան ՈՐ-ի նման, կցագիր է, իսկ ՈՆ երկտառը՝ հստակ այդպիսին է՝ Խ-ի աջ ելուստները կպած են Ո-ի աջ ստեղծին.

ժ. եղծված՝ ընթերցված մի տողից մի փոքր ավելի տեղում ենթադրելի են բնաձևային՝ «առ Տէր» կամ «առ Աստուած» դարձվածները և մահվան թվականի արձանագրումը՝ «ի թու.» և այլն. սրանով էլ ամբողջանում է արձանագրության շարադրանքի մասին մեր պատկերացումը.

ժա. հրատարակիչն արձանագրությունը թվագրելու փորձ չի արել, մինչ հնագրական առանձնահատկություններով սա կարող է վերաբերել առնվազն XIV դարին:

Այս թվագրումը հաստատում է նաև արձանագրությանս մեջ առկա միակ՝ նորշահ անվան՝ նույն XIV դարի ընթացքում դրիմահայություն միջավայրում կիրառվածության հաճախությամբ, և ընդհակառակն՝ XV դարում նույն անվան՝ նույն միջավայրում շարձանագրվածությամբ. Դիտարկումներս հիմնված են հայերեն ձեռագրերի XIV—XV դդ. հիշատակարանների հրատարակված հատորների⁷ պարունակած նյութի վրա, ուստի և տեղին ենք համարում թվարկումն աշխարհագրական և ժամանակագրական նույն շրջանակներում արձանագրված՝ նորշահ անունով հայտնի անձանց վերաբերող տեղեկությունների համառոտություն⁸.

1. Հետագա ստացող՝ ենթադրաբար 1347 թ. Սուրխաթում նատեր գրչի գրած Շառնտրի՝ Երևանի Մատենադարանի ձեռ. հմր 3797. սրա 435բ էջի՝ գրչության անանուն հիշատակագրությունը («Քրիստոս Որդի Աստուծոյ... թող զամենայն սխալանս ստացողի ճառիս») հետագա ձեռքով շարունակված է. «գԳոբզն և գԳուհար տիկինն, և գնորշան և գկողյակից նորա զՈւստիանէն»⁹:

խաւսութիւն», Դիվան, է, էջ 20 (Թեոդոսիայի երկրագիտական թանգարան. արձանագրությունն անթվական է և՛ չթվագրված). հմտ. նույն տեղում, էջ 42, 47 (1389 թ.), 57 (1532 թ.):

Ը XIII—XIV դդ. ձեռագրերում այս գիրը երբեմն նույն էլում ունենում է երեք-չորս տեսակ գծագրություն. նույն երևույթը կա նաև վիմագրության մեջ:

7 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան. Երևան, 1950 (այսուհետև՝ Հիշ. ԺԴ դ.), էջ 364: ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա (1401—1450 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան. Երևան, 1955. մասն Բ (1451—1480 թթ.), Երևան, 1958, մասն Գ (1481—1500 թթ.), Երևան, 1967: Այս պնդումն անվերապահ լինել չի կարող, որովհետև հատորների հրատարակումից հետո լույս են տեսել բազմաթիվ նոր ձեռագրացուցակներ՝ իրենց բերած նոր նյութով, որ երբեմն շատ մեծ քանակ ունի և կարող է վրսել ստացված պատկերացումը:

8 Հ. Աճառյանի արձանագրած՝ նորշահ անունով երեք անձինք այս տարածքին շեն վերաբերում. հմտ. Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Երևան, 1942, էջ 86: Նկատենք, որ Աճառյանի այս կոթողային գործը որպես ստուգման չափանիշ-տեղեկատու աղբյուր զգալի չափով հնացած է, որովհետև նրա կազմվելուց և հրատարակումից հետո հրատարակվել են բազմաթիվ սկզբնաղբյուրներ՝ ձեռագրացուցակներ, վիմագրերի և հիշատակարանների ժողովածուներ, ժամանակագրություններ և այլն: Ուստի և անպայման կարիք կա այս կամ այս պիսի բառարանի ճշգրտված-լրացված վերահրատարակության, որ, անկասկած, եղածի համեմատությամբ մի քանի անգամ ծավալուն է լինելու, ուստի և արժե այն պատրաստել պորժո դյուրացնող՝ ժամանակակից համակարգչային ծրագրերով:

9 Հիշ. ԺԴ դ., էջ 364:

2. Օգնող գրչության 1357 թ. Կաֆայում Անտոն քահանայի գրած և ստացած Տօնապատճառի՝ Երևանի Մատենադարանի ձեռ. հմր 2039. «աւգնական հղին ի գիրս մարմնաւոր ընչիւք. անուանք նոցա, որ յիշին աստ, այս է՝ Ումէկ ժամկոչն, և Նորշահն, և Առաքին, որ ի սղութեան ժամանակիս օգնեցին մեզ հացիւ և արղեսմբին»¹⁰, Հետագա շարադրանքից պարզվում է, որ Ումէկ ժամկոչն ավելի շատ աշխատանքով է օգնել, իսկ Նորշահն ու Առաքինը՝ «հացիւ»: Թվարկում է նաև Նորշահի ընտանիքի անդամներին՝ հայր «Հարաւտ», մայր (անանուն), կենակից Ավագ տիկին, վաղամեռիկ որդի Մարտիրոս և սրա քույր Շնուֆոր տիկին¹¹:

3. Երբայր ստացող Շահնշահի, 1358 թ.՝ Երևանի Մատենադարանի ձեռ. հմր 7471. այս ձեռագրի գրչության վայրն անհայտ է, սակայն անպայման գրված է Ղրիմում, այնտեղից անցած Նոր Նախիջևան, որտեղից և 1922 թ. և կել է Երևան: Ուշագրավ է, որ մեզ հետաքրքրող Նորշահի մյուս եղբայրների անունները ևս նույնպիսի կազմություններ են՝ Վահրամշահ, Ամիրշահ¹²:

4. Ազգական Աստվածատուրի, Ղրիմ քաղաքում 1377 թ. ստացել է Ընտանիքի Շնորհալու Կաթողիկոս թղթերի մեկնությունը՝ Երևանի Մատենադարանի ձեռ. հմր 7373¹³:

5. Ազգական Աստվածատուրի, որ 1380 թ. Կաֆայում ստացել է Ֆրանսիայի ազգային գրադարանի հայերեն՝ շատ արժեքավոր հմր 80 ձեռագիր Գանձարանը¹⁴:

Այս անունների թվարկումը հազիվ թե մեր արձանագրության վերաբերմամբ ուղղակի որևէ նշանակություն ունենա. սա միայն անուղղակիորեն հաստատում է մեր թվագրումը և ցույց տալիս, որ Սուրբակի արձանագրությունը Ղրիմի հայերեն վիճագրերի շարքի հնագույններից է:

* * *

Նկարագրական մի քանի խոսք էլ խաչքարի ձևավորման և ամրոցի տարածքից հավաքված ու թանգարանում դրված խաչարձանների մասին.

Խաչքար-մահարձանի վերին եզրը չարդված է և անկանոն գծագրություն ունի. հավանաբար սա էլ ստորինի նման ուղիղ է եղել: Արձանագրությունից վեր կա կանոնական՝ երկկողմ, բառաստիճան պատվանդան, որին, իր եզրերի՝ եռաթիկն ծաղկի նմանվող զարդ-ոտքերով հենված է կենտրոնական ուճավորված խաչի պահպանված ստորին թևը, սրա եզրազարդերի միջև ութաթև հավերժության նշանն է: Այս խաչի չպահպանված հորիզոնական թևերի տակ էլ տեղավորված է երկու միանման խաչապատկեր, որոնց վերին երեք թևը պարզ և հավասար են, ստորինները՝ երկար և երեք սուր ելուստով ավարտվող:

Թանգարանում կան նաև մամնայն հավանականությամբ ամրոցի տարածքից ու շրջակայքից հավաքված՝ մասն ու մեծ, արձանագրություն չունեցող խաչարձաններ, որոնց մեծ մասը, անկասկած, հայկական են¹⁵, և

10 Նույն տեղում, էջ 429:

11 Տե՛ս նույն տեղում:

12 Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 439:

13 Տե՛ս նույն տեղում, էջ 524:


14 Տե՛ս Raymond H. Kevorkian, Armén Ter-Stepanian, avec le concours de Bernard Outtier et de Guevorg Ter-Vardanian. Manuscrits arméniens de la Bibliothèque nationale de France. Catalogue. Bibliothèque nationale de France (Fondation Calouste Gulbenkian), Paris, 1998, col. 181.

15 Թեև գրասարքիկներին բացատրողները հայտարարում են, որ բոլոր խաչերը հայկական են, բայց իտալական տապանաքարերի վրա և պարիսպների աշտարակներին կան նաև պարզ խաչանշաններ, որ հաճախ ուղեկցվում են լատինատառ արձանագրություններով և որոնք անպայման ջենովական են:

որոնց մասին մոտավոր պատկերացում տալու համար այստեղ բերում ենք շորսի՝ լուսանկարներից վերարտադրված ընդհանուր գծանկարը¹⁶:

Մեր շարադրանքը գրախոսություն չէ¹⁷, սակայն առիթն օգտագործելով, անհրաժեշտ ենք համարում անելու մի քանի ընդհանուր դիտարկում:

ա. Աղբյուրագիտական արժեքի առումով ձեռագրական հիշատակարանների և վիժագրերի տարբերությունը մեծ չէ, ուստի կարծում ենք, որ վիժագրության դիվանի կազմողները պարտավոր են գոնե մոտավոր թվագրելու իրենց տեսած անթվական արձանագրությունները (թեկուզ՝ թվագրման եղբայրականի շնորհիվ այս դեպքում համեմատաբար պակաս հուսալի են, քան՝ ձե-



ռագրական հիշատակարաններին են՝ գիր, թանաքի գույն, այլ հիշատակարանների համեմատ տեղադրման մանրամասներ և այլն), սակայն օժտնդակ պատմագիտական նյութ միշտ կարող է գտնվել:

բ. Վստահ ենք նաև, որ բոլոր վիժագրերը թվագրած լինելուց հետո 'Իվանի գործածականությունն ավելի կդյուրանա, եթե նրա պրակներն ունենան նաև: «Արձանագրությունների ժամանակագրական» ցանկ:

գ. Նկատի ունենալով հիշատակարանների և վիժագրերի նույնարժեքության հանգամանքը մտածել է տալիս, որ «Իվան»-ի պրակներին անհրաժեշտ են նյութերի՝ առարկայական¹⁸, արհեստների անունների, մականուն-տոհմանունների և այլ ցանկեր:

դ. Անկասկած է նաև, որ շուտ թե ուշ կարիք է լինելու մեր վիժագիր հուշարձանները ենթարկելու նաև համաբարբառային-բառարանագրական հետազոտման, ուստի և թվում է՝ արժե հատորներն օժտել նաև նրանց մեջ հրատարակված արձանագրությունների գոնե սակավ գործածական բառերի ցանկերով: Մի օրինակ. Ալուշտայի՝ 1551 թ. հմր 399 արձանագրությունն ունի «անխնդաց»¹⁹ բառը. այս ընթերցման ճշտությանը չենք կասկածում, րստ այսմ էլ այն առավել քան արժեքավոր ենք համարում, որովհետև Ստ. Մայխանյանցի ունեցած՝ «ուրախություն չվայելած՝ վաղամեռիկ եղած» իմաստն ունեցող այս բառի միակ վկայությունը քաղված է բարբառային նյութից՝ «Անխնդացր լաւ մարդ էր»²⁰: Այս պրակի դեպքում առավել քան կարևոր էր

16 Ցավոք, պատրաստ չլինելով, չկարողացանք արձանագրել մեր հոգվածի նյութ մահարձանի և այս խաչքարերի գոնե հիմնական շափսերը, բայց մահարձանի երկարությունը հավանաբար շուրջ 1 մետր է, մյուսներինը՝ 50—70 սմ:

17 Սամվել Կարապետյանն այս պրակն արդեն գրախոսել է («Պատմա-բանասիրական հանդես», 1998, № 1—2, էջ 263—266) և հիմնականում մամուլից քաղված տեղեկություններով նշել նյութի ընդգրկվածության պակասներն ու այլ թերություններ, սակայն կառուցվածքային խնդիրների մասին չի խոսել:

18 Ավելորդ ենք համարում օրինակներով ապացուցել-հաստատելը, որ արհեստագործության, կենցաղի և կյանքի ամենատարբեր դրսևորումների վերաբերյալ վիժագրերը սովորաբար շատ և բազմաբնույթ նյութ ունեն, որով և առարկայական ցանկերն այս պրակաշարի համար իսկապես անհրաժեշտ են:

19 Տե՛ս Դիվան, է, էջ 151:

20 Տե՛ս Հայերէն բացատրական բառարան, կազմեց Ստ. Մայխանյանց, հ. Ա. Երևան, 1944, էջ 124:

օտարաբանությունների՝ օտար բառերի ցանկի կազմումը, որով հետագայում կհեշտանա այդ ցանկերի պարունակածը հիշատակարանային նյութին համարելը և ըստ այդմ ավելի փաստված եզրակացությունների հանգելը:

Վերջում՝ երկու մանր թեքություն արձանագրում.

1. Սուրբ հաշ վանքում գտնվող՝ 1762 թ. վերաբերող 222-րդ արձանագրությունն ընթերցված է. «Գրիգոր վարդապետի երկրէն առճի Սարգիսըս Գ (3) տարի Սուրբ հաշ խրզմեթ արի վասն կենաց իմոց». սա ծանոթագրված է՝ «Երկրէն բառը փորագրված է Եէկէն: Եթե Առնի տեղանունը շհաջորդեր, կարիի էր վերծանել նաև եղյան—քեռորդի նշանակությամբ»²¹, Զգիտենք՝ Առնի անուն ընդհանրապես կա՞րողյոք, սակայն գրքի տեղանունների ցանկում (էջ 404) չկա. ավելի ճիշտ կլիներ սա հասարակ անուն՝ «առաջին» բառի բարբառային ձև կամ արհեստի անուն համարելը, ուստի և՛ Եէկէն—ը թեական «քեռորդի» իմաստով հասկանալը:

2. Սիմֆերոպոլի հայկական գերեզմանոցում գտնվող՝ 1879 թ. մի տասնադրից. «որ կոյս կենօքս լացաւ նա երկին 23 ամաց մատաղ հասակին»²². ընդգծված տառը բնագրում երևի չկա և ավելորդ է, որովհետև այս շարագատության մեջ «լցաւ» ձևը նշանակում է՝ լրացրեց, ավարտեց, վախճանվեց:

²¹ Դիվան, է, էջ 107:

²² Նույն տեղում, էջ 130: